ՆՈՐ-ԴԱՐ

№ 205 ՏԱՍՆՀՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 28 Նոյեմբերի 1897 Ուրբաթ 28 Նոյեմբերի ՏԱՍՆՀՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 205

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում մխիթարեան խմբագրատանը.

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ

ՆՈՐ-ԴԱՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթ առաջին *անգամ* 1893-ին *հրատարակուի Թիֆլիսում նոյն դիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից։*

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսւանը 6 րուբլի, Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ. Թիֆլիսում՝ 1 ր.

ԵՒՐՈՊԱՑԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՑԻ բաժանորդները վճարում են տարեկան 8 դոլար։

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում Ղեղարդ «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Լորիս-Մելիքեան փողոցում պոստ-հեռագրատան մօտ։

Օտար քաղաքներից բաժանորդ գրւողները դիմում են խմբագրութեան այս հասցէով՝ **Тифлисъ въ редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“** կամ Tifils (Caucase), rédaction de journal „Nor-Dar“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Հայոց թատրոնի գործը։
Գովքասու պ. կառավարչապետը ս. Էջմիածնում։
Քրոնիկոն.—Լուրեր։
Ողջոյնի մարդիկ։
Հայոց թատրոն Թիֆլիսում։
Հայոց թատրոն Բագւում։
Թղթակցութիւններ.— Բագու։
Դատական։
Քաղաքական.— Կրետէի խընդիրը։
Անկարգութիւններ Պրագում։
Պապիտան Դրայֆուսի գործը։
Հեռագրներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 27 Նոյեմբերի 1897 թ.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ԴՈՐԾԸ

Իսկապէս հայոց թատրոն ոչ մէկ տեղ գոյութիւն չունի, ամեն հայաշատ առաջնակարգ քաղաքներում իսկ հայոց թատրոն չկայ, մեզ յայտնի չէ։

Իսկ հայերէն ներկայացումներ այժմ տեղի են ունենում Թիֆլիսում և Բագւում. Թիֆլիսում անցործ մնացած դերասան երից մի խումբ, այն ևս պատահաբար, ներկայացումներ է տալիս մի քանի թատերասէրների առաջնորդութեամբ և աջակցութեամբ։

Բագւում մի քանի կարող անձեր հայոց թատրոնի գործը սըրտին մօտ առնելով, գովելի եռանդով և իրենց սեպհական միջոցներով կազմել են մի խումբ տեղական և Գոլոից հրաւիրուած դերասաններից և հայերէն ներկայացումներ են տալիս։

Այդպիսով թէ Թիֆլիսում և թէ Բագւում խմբուած դերասանները գործելու և ապրուստի միջոց են գտնում, իսկ հայոց ներկայացումներին յաճախող հասարակութիւնը ժամանակաւորապէս զուարճանում է հայերէն լեզուով գանազան պիէսների ներկայացմանը ականատես լինելով։

Բայց որ այդ միջոցներով ոչ հայոց լեզուն է զարգանում, ոչ թատրոնը ծառայում այն նպատակներին, ինչ նպատակների համար պէտք է որ գոյութիւն ունենան մի նոր զարգացող ժողովրդի համար թատրոնները—այդ ճիշտ է։

Ինչպէս որ ճիշտ է այն, որ այդպիսի պատահական հայոց ներկայացումներով, ինչպիսիք այսօր տեսում են Բագւում և Թիֆլիսում, հայոց թատրոնի գործը հաստատ հիմքերի վրայ չի դնւում։

Մենք աւելի լաւ խմբեր ենք ունեցել. հազար անգամ աւելի փառաւոր ներկայացումներ, բայց հայոց թատրոն չենք ունեցել, չենք կարողացել կանոնաւորել և չկայ հայոց թատրոն։

Եւ ոչ մի տեղում հայոց թատրոն չունենալու ամենալաւ ապացոյցն այն է, որ Ազամեանի, Աստղիկի և նման տաղանդաւոր դերասաններից յետոյ, հանդէս են եկել և արտիստ կոչուելու պրէտենզիայով դերասաններ, որոնք յիշեալ դերասաններից առաջ էլ իրրև անպէտք են ճանաչուած։

Ինչպէս մեր շատ գործերում, այնպէս և թատրոնի գործում մենք առաջադիմելու փոխարէն յետ ենք դնացել. դրա պատճառն այն է, որ հայոց թատրոն չկայ։

Այդպիսով մենք ոչ թէ զրկւում ենք ընտիր դերասաններից, այլ և մեր կեանքը զրկւում է բեմական տաղանդներ ստեղծելու և մնուցանելու ընդունակութիւնից։

Այդ դեռ բաւական չէ. սեպհական հայոց թատրոն չունենալով, հայերէն լեզուով տեղի ունեցող ներկայացումներով մենք չենք կարող ժողովրդին տալ այն, ինչ որ թատրոնը պարտաւոր է տալ։

Իզուր չէ Կոպէնհագէնի թատրոնի ճակատին գրուած այս գրող և խորհրդաւոր խօսքերը.«*Միմեանց զուարճանալու համար չէ*»։

Այո, միմեանց զուարճանալու և ջգիրը գրգռելու համար չէ թատրոնը։ Բայի ճաշակը նրբացնելուց, սիրտը և միտքն ազնուացնելուց, հայոց թատրոնը մեր ժողովրդի, այսինքն մեծերի համար, պէտք է լինի և բարոյական կրթութեան դպրոց։

Իսկ մեր հայոց պատահական ներկայացումներին ներկայացրած պատահական և մեր ժողովրդի համար աննպատակ պիէսները թէ պատւում են հայոց լեզուն, թէ կոպտացնում ճաշակը և թէ միտքն ու սիրտը պղտորում։ Լաւը, վատը, բարձրը և ստորը առանց սիստեմի միասին խառնուած իրրև մտաւոր և հոգեկան սնունդ առաջարկում է թատրոն յանախող հասարակութեանը։ Օգուտը շատ չնչին է, իսկ վնասը մեծ։

Որպէս զի հայոց թատրոն գոյութիւն ունենայ, որպէս զի ընտիր և չնորհալի դերասաններին յաջորդեն աւելի չնորհալի արտիստներ և ոչ անշնորհք փեշաքաշներ, որպէսզի ժողովրդական հայոց թատրոն լինի և հայոց բեմը ծառայէ թատրոնի իսկական և վերին առաքելութեան համակրելի և օգտաւէտ նպատակներին, անհրաժեշտ է, որ իրագործուին այն պայմանները, որոնց մասին «Նոր-Դար»-ը շատ տարիներ առաջ առիթ է ունեցել խօսելու և կրկնում է առաջիկայում։

Այլապէս մասնաւոր անձերի մէջ յայտնուող գովելի եռանդը և ամեն նայն քաջալերութիւնն արժանի աշխատութիւնը կանչնեն ի զուր, ինչպէս որ անեցել են մինչև այժմը։

ԿՈՎԿԱՍՈՒ Տ. ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ազգիս Վեհափառ Հայրապետը տեղեկանալով, որ Գովկասու քաղաքական մասի Տ. Կառավարչապետ Իշխան Դոլգորուկովի Վերջերիվիչ Դոլգորուկովը հոկ. 2-ին, հինգշաբթի, պէտք է հաճի այցելել Ս. Էջմիածին, Գեր. Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսին և Տ. Նահապետ վարդապետին հրամայեց ընդ առաջ ելնել Նորին Պայծառափայլութեան Իգդիր ասանը, ուր Իշխանը ժամանելու էր չորեքշաբթի երեկոյեան։

Համաձայն այս պատուէրի Ս. Էջմիածնի միաբանութեան յիշատակեալ անդամները հոկ. 1-ին մեկնեցան դէպի Իգդիր։ Երեկոյեան ժամը 6½-ին երկրիս Տ Կառավարչապետը հասաւ Իգդիր և մի քառորդ ժամից յետոյ ընդունեց Նորին Ս. օծութեան հրաւիրակներին։ Գեր. Տ. Սուքիաս սրբազանը Վեհափառ Հայրապետի կողմից չնորհաւորելով Նորին Պայծառափայլութեան բարի գալուստը, խնդրեց որ իշխանը Ս. Էջմիածին չնորհ բերէ և հաճի սեղանակից լինել Նորին Սրբութեան հետ Վեհարանում։ Իշխանը պատասխանեց. Թէ ինքը առանց այդ հրաւէրի արդէն մտադիր էր գալ Ս. Էջմիածին, աղօթել այդ հնադարեան սրբավայրում և այցելել Նորին Վեհափառութեանը. իսկ այս սիրալիր հրաւէրը ըղձունելուց յետոյ կրկնակի սիրով կայցելէ Թէ վանքն և Թէ Վեհափառ Հայրապետին։ Այնուհետև հրաւիրակների հետ խօսակցելուց յետոյ, երբ Իշխանը տեղեկացաւ, որ նոքա չատ պում են վեռադառնալ Ս. Էջմիածին, կրկին և կրկին չնորհակալութիւն անելով, յանձնեց յայտնել իւր յարգանքը և ողջոյնը Նորին Վեհափառութեան, յայտնելով, որ հետեւեալ օրը առաւօտեան ժամը 9 ին կմեկնի Իգդիրից։

Հինգշաբթի, ժամը մէկից մի քառորդ պակաս Տ. Իշխան Դոլգորուկովը երեանի Նահանգապետ Գոմս Տիգենհաուզէնի և իւր քարտուղար Իշխան Կուրակինի հետ, չրջապատուած բազմաթիւ ձիաւորներով, հասաւ վանքի բազրի դուռը։ Այստեղ ժողովրդի կողմից աղ ու հաց ընդունելուց յետոյ, Իշխանը դիմեց Գեր. Տ. Գրիգոր Եպիսկոպոսին, որ Տ. Մեսրովբ վարդապետի հետ մի քանի խօսքով բարի գալուստ մաղթեց Նորին Պայծառափայլութեանը։ Ցրդատայ դրան մօտ դիմաւորեցին Բարձր Հիւրին Գեր. Տ. Սուքիաս, Գեր. Տ. Նոյի Արքեպիսկոպոսները, Տ. Նահապետ, Տ. Կարապետ և Տ. Մամբրէ վարդապետները։ Ցրդատայ դռնից մինչև Մ. Ծաճարի դուռը երկու շարք կանգնած էին Հոգևոր ձեմարանի աշակերտները։ Իշխանը ողջունեց աշակերտներին հայերէն բարի լոյս, խօսքերով։ Մայր Ծաճարի դրանը դիմաւորեց Աւագ Լուսարար Տ. Մակար Եպիսկոպոսը։ մատ եկեղեցի և Իջման Սեղանի առաջ աղօթեց։ Սեղանի ձ և ձախ կողմում Տ. Գրիգոր և Տ. Համազասպ վարդապետները չուրջառազգեստ կանգնած Ս. խաչն ու Աւետարանն էին բռնած, որոնց երկիւղածութեամբ մերձենալով համբուրեց Իշխանը և դուրս գալով եկեղեցուց, երկու կարգ շարուած աշակերտների միջով դիմեց դէպի Վեհարան։ Վեհարանի դրան դիմաւորեց Տ. Խաչիկ վարդապետը, սանդուղների գլխին Տ Գարեգին վարդապետը։ առաջին նախասենեակում Սինոդի Գրոկուրորի պաշտօնակատար Գ. Յովսէփ Տ. Յովսէփեանը, իսկ երկրորդ նախասենեակում Տ. Կորիւն վարդապետը։

Տ. Կառավարչապետի, նահանգապետի և քարտուղարի համար Վեհարանում առանձին սենեակներ էին պատրաստած, ուր առանձնանալով, մի փոքր հանգիստ առնելուց յետոյ, հիւրերը առաջնորդուեցան դէպի Վեհափառ Հայրապետի գրան դահլիճը։ Այստեղ ազգիս Ծերունազարդ Հովուապետը Սինոդի անդամոց Գեր. Տ. Երեմիա Արքեպիսկոպոսի, գեր. Տ. Աբիսաղակէս Եպիսկոպոսի, Տ. Վահան և Տ. Աբիսաղվարդապետների հետ սպասում էր իւր բարձր հիւրին։ Երբ Իշխանը իւր ուղեկիցներով մատ դահլիճ Նորին Սրբութիւնը առաջ եկաւ և դահլիճի մէջ տեղում խաչակնքեց Իշխանին։ Նորին Պայծառափայլութիւնը Վեհի աջն առաւ և յետոյ սիրալիր կերպով երիցս համբուրուեցան։ Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Սինոդի անդամներին, իսկ Իշխան Կառավարչապետը իւր ուղեկիցներին և ապա Նորին Սրբութիւնը հրաւիրեց Մեծ Հիւրին Ծագկեայ այվանը (դահլիճը), ուր ներս գնաց և պ. Նահանգապետը, նաև Տ. Նահապետ վարդապետը և պ. Գոստանդին Իւզբաշեանը իրրև թարգմաններ։ Վերջինս եկել էր երեանից Կառավարութեան անօքէնութեամբ և սպասում էր պ. Կառավարչապետին դրսի դահլիճում, ուր և Տ. Նահանգապետը ներկայացրեց նորան Իշխանին։

Ծագկեայ այվանում տեսակցութիւնը տեւեց երեք քառորդ ժամ և շատ սիրալիր էր։ Թէ վայելելուց յետոյ Իշխանը թոյլտուութիւն խնդրեց Վեհափառից ս. Էջմիածնի հնութիւնները և նշանաւոր տեղերը այցելելու և մեկնեցաւ դահլիճից։

Տ. Կառավարչապետի համար պատրաստած դահլիճում այդ միջոցին ժողովուել էին Վաղարշապատում ծառայող աստիճանաւորները Նորին Պայծառափայլութեանը ներկայանալու համար։ Սոցա ընդունելութիւնից յետոյ Իշխանը դուրս եկաւ Վեհարանից և դիմեց դէպի Մ. Ծաճարը։ Ծաճարի դրանը ընդունեց Իշխանին Տ. Մակար Եպիսկոպոսը և առաջնորդեց ներս։ Իջման սեղանի առաջ Իշխանը հանեց իւր թաւրը և այնպէս մտեցաւ Աւագ սեղանին։ Թանգարանը դիտելուց յետոյ մտաւ ս. Գէորգայ խորանը, ուր բազմեցրած էին Ծաճարի ամենանշանաւոր սրբութիւնները—կենաց փայտը, ս. Ղեղարդը, ս. Լուսաւորչի Աջը, Նոյեան տապանի մասն և այլն։ Իշխանը սոցա երկրպագելուց յետոյ, հետաքրքրուեցաւ մի քանի հին ձեռագրերով և մանաւանդ ուշադրութիւն դարձրեց Եկատերինա Բ. Կայսրուհոյ նուիրած թանկագին չուրջառի վերայ։ Դուրս գալով խորանից Իշխանը բարձրացաւ Ս. Յովհաննու Մկրտչի սեղանը, ուր տեղաւորուած էր նոր օրհնուած Ս. Միւռոնը նոր կաթսայի մէջ։ Ծաճարի ներսը տեսնելուց յետոյ, Իշխանը ելաւ հիւսիսային գռնից և ուղեորուեցաւ դէպի Տպարան և ապա ձեմարանի դրսի դրանը դիմաւորեց Տեսուչը և ներկայացրեց մի պատուոյ յայտարարութիւն ձեմարանի դրութեան մասին։ Աշակերտները ժողովուած էին հանդիսարանում, որի մուտքի առաջ երկու կարգ կանգնած էին ուսուցիչները։ Հէնց որ Մեծ Հիւրը մտաւ ձեմարան, իսկոյն ի պատիւ գալստեան Տ. Կառավարչապետի զանկի ձայնը հնչեց։ Սանդուղի գլխին Տեսուչը ներկայացրեց ուսուցիչներին, որոնցից ամեն մինին Իշխանը հարցրեց նոցա ուսման տեղը և ինչ առարկայ աւանդելը։ Յետոյ Իշխանը մտաւ հանդիսարան և հարցնելով աշակերտների օրտեղացի լինելու մասին, Տեսչի առաջարկութեամբ թոյլ տուեց, որ երգիչները երգեն Արքայական օրհներգը—Ցէր պահէ զԹագաւորն մեր, ռուսաց լեզուով։ Այնուհետև դիմեց ձեմարանի մատենադարանը, ուր այցելուց գրքում հաճեցաւ իւր անունը ստորագրել և մանելով ննջարան, չնորհակալութեամբ մեկնեցաւ ձեմարանից։ Ի վերջոյ Նորին Պայծառափայլութիւնն այցելելով Մայր Մատենադարանը, գնաց Վեհարան։

Վեհարանի դրսի դահլիճում ութ հոգու համար սեղան էր պատրաստուած։ Մի քանի րոպէ հանգստանալուց յետոյ, Իշխանը մտաւ դահլիճ և ժամը 3-ին մօտ Վեհափառ Հայրապետը օրհնեց սեղանը և նստեցին ճաշի։ Նորին Ս. Օծութիւնը բազմեց սեղանի գլուխը ունենալով իւր աջ կողմից Պայծառափայլ Իշխանին և ձախ կողմից Գոմս

Տիրէնտուէնին։ Ձէր Գատարտի աշխարհագրութիւնը Թերթիսխոսով և Գեր. Տ. Ներսէս Պետրոսեան։ Դասագիրք տասնեցամեայ կարգի աշակերտների համար։ Հրատարակութիւն Ս. Ղազարու Մխիթարեան միաբանութեան։ Վենետիկ, տպարան Ս. Ղազարու, 1897։ Գին 2 ռուբլի։

Ներկայ տարուայ Յունուարի 1-ին Ս. Ղազարու միաբանութիւնը հրատարակեց Տիրէնտուէնի աշխարհագրութիւնը, որ գրուած է Գեր. Տ. Ներսէս Պետրոսեանի կողմից։ Գիրքը մեծ ուշադրութեան է արժանացել ուսումնական շրջանների կողմից, որովհետև մինչև այժմ մեր դպրոցներում ոչ մի աշխարհագրութիւն չկար, որ գրուած լինէր ազգային ոգով և ազգային տեսակէտով։ Ներկայ աշխարհագրութիւնը ունի 8 քարտէս և 8 գունաւոր նկարներ։ Ձեռնարկը ունի 3 մասեր, որոնցից առաջինը պարունակում է ընդհանուր աշխարհագրութիւն, երկրորդը՝ Ասիայի, Եւրոպայի, Աֆրիկէի, Ամերիկայի և Աւստրալիայի մասնաւոր աշխարհագրութիւնը, իսկ երրորդը՝ Հայաստանի աշխարհագրութիւնը։ Գրքի վերջում կան աղիւսակներ, որոնց մէջ տրուած են Եւրոպայի, Ասիայի, Աֆրիկէի և Ամերիկայի պետութիւնների մակերեսները, բնակչութիւնները, մայրաքաղաքները և այլն։ Գրքի վերջում կան նաև Հայաստանի աշխարհագրական անունների բացատրութիւնները։ Գրքի մասին մանրամասն կը գրենք յետոյ։

Ներկայիս Ռուսաստանի մէջ ամենից շատ տարածուած թերթերից մէկն է «Новое Время»-ն։ Նրա խմբագիրը՝ Ա. Ս. Սուվորինը, ինչպէս յայտնի է, ունի մեծ ազդեցութիւն Ռուսաստանի կառավարութեան վրայ։ Ուստի և «Новое Время»-ն ամենից շատ կարդացուող թերթերից է։ Նրա տպաքանակը հասնում է 120,000-ի։ Ամսական բաժանորդագինը 2 ռուբլի է։

Ներկայ 19 թ., սեպտեմբերի 14-ին, «Новое Время»-ն տպագրեց մի հեռագիր Վիեննայից, որի համաձայն Աւստրիայի կառավարութիւնը որոշել է Աւստրիայի Գալիցիա նահանգում ստեղծել մի նոր գաւառ, որի կենտրոնը պիտի լինի Ստանիսլաւ քաղաքը։ Այդ գաւառի մէջ պիտի մտնեն Գալիցիայի հետևեալ գաւառները՝ Ստանիսլաւ, Տարնօպոլ, Կոլոմէա, Սթրի, Դրոհոբիչ և Բորիսլաւ։ Այդ գաւառների մէջ կան շատ հարուստ նաւթահանքեր։ Ստանիսլաւ գաւառի մէջ կան 600 նաւթահանքեր, որոնց տարեկան արտադրութիւնը հասնում է 1,200 հազար փութ նաւթի։ Նաւթահանքերի 500 սեփականատէրերից 2,000 հրէաներ են։

Ծանօթ հանգամանք է, որ Գալիցիայի հրէաները մեծ մասամբ զբաղուում են նաւթահանքերով։ Ստանիսլաւ գաւառի մէջ կան 3 լ/ն, դաշտ 1½ լ/ն, Տրոհոբիչ։ Փոխ. Ֆրանկոյ 3. Տերէնչ Պետրո. պատ Ներքեմպերգեր 3. Դասատու Ֆրանկոյ Իլիաշ Ռատցաս կազմակերպիչ Ս. Դասատու «Հայ Ազգ» ամսագրի մէջ։ Ներկայ տարուայ Յունուարի 1-ին Ս. Պետրոսեան Ֆրանկոյ Ֆրանկոյ Ֆրանկոյ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Մարտ 22-ին Հայոց Իսրայել Ներսէս Վեհափառ Հայրապետ Գրիգորեան Ը-ը Տէր Հայրապետը՝ Ս. Էջմիածնի մէջ նիստ մը ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան մասին։

Ան մի նիստ մը չէ որ, ինչպէս ամէն տարուան մարտ 22-ին, Տէր Հայրը կը հրաւիրէ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, որ հնդամեայ ընդմիջումէ մը ետք, Ս. Հոգեգալստեան տօնին կը վերսկսի Ս. Պատարագի արարողութիւնները։ Այդ օրը Հայրը կը հրաւիրէ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Ս. Պատարագի արարողութեան ներկայ գտնուող Հոգեւորականները՝ Վեհարանի Ս. Խորհուրդին մէջ, ուր կը տրուի ճաշ մը։ Ճաշի ընթացքին Վեհափառ Հայրը կը խօսի Հայաստանի Հանրապետութեան մասին։

Ան կը խօսի Հայաստանի Հանրապետութեան մասին, որ ինքնին մեծ իրողութիւն մըն է, որ ինքնին մեծ նշանակութիւն ունի։ Ան կը խօսի Հայաստանի Հանրապետութեան մասին, որ ինքնին մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ Հայաստանի Հանրապետութիւնը ինքնին մեծ նշանակութիւն ունի։ Ան կը խօսի Հայաստանի Հանրապետութեան մասին, որ ինքնին մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ Հայաստանի Հանրապետութիւնը ինքնին մեծ նշանակութիւն ունի։

պետն անհրաժեշտօրէն պէտք է յուսադաւն լինի,—ռուսաց կառավարութիւնը կ'ըսպասչաճանապէս մեծ պետութիւնների ընտրութեանն է առաջարկել երկու թեկնածու, որոնք են. Վոևվոդ Դիուրո Պետրովիչ, Նեգուշ (զօրաբաժնի հրամանատար Ցետինէում), Մաւրոհենի բէյ (Ռաչինգտոնի թուրքաց նախկին դեսպան) և Կարաթէոդորի է ֆէնդի, որ արդէն 22 տարի Խուրքաց դեսպան է Բրիւսէլում։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 25 Դեկտեմբեր. — Բարձ. բազոյն հրամանով Պարիզի ռուսաց դեսպան բար. Մօրենհայմը արձակուում է իւր պաշտօնից և մնում է պետական խորհրդի անդամ։

Կ. ՊՈԼԻՍ.—Մինիստրների խորհուրդն երէկ ընդունեց յոյն-Թրքական հաշտութեան պայմանագիրը և յետոյ ներկայացրեց սուլթանին ի հաստատութիւն։ Հաշտութեան պայմանագիրը ստորագրուելու մասին հաղորդուած է բոլոր վիլայէթները։

ՌՕՐԼԻՆ.—Ռայխստագ։ Ծովային ծրագրի մասին հակաճառութիւնները սկսուեցին նրանով, որ պետական կանցլերը պնդում էր, թէ հենց խաղաղութեան քաղաքականութեան համար գերմանական նաւատորմիղը պէտք է մի այնպիսի այժ լինի, որը բարեկամների և թշնամիների աչքում բաւական կշիռ ունենայ։

ՀՌՈՄ.— Մինիստրութիւնը հրաժարական տուեց։

ՎԻՆՆԱ, 20 Դեկտեմբեր. — Ընդդիմադիր կուսակցութիւնը մերժեց կառավարութեան առաջարկութիւնը, որով փոխադարձ համաձայնութեամբ Բոհեմիան պէտք է բաժանուի գերմանական, չեխական և խառն գաւառների։ Մլադոչեխները յայտարարում են, թէ կառավարութեան առաջարկները կարող են քննութեան ենթարկուել այն պայմանով, որ պահպանուին երկու ազգութիւնների էլ հաւասար իրաւունքները և երկրի միութիւնը։

ԲԵՐԼԻՆ. — Ռայխստագ։ Ազատախոհ ազգային կուսակցութեան մի անդամ հակասակ է խօսում նաւատորմղի աճեցման օրինագծին։ Կեդրոնի կուսակցութեան անդամ Լիբերը յայտարարում է, որ իւր կուսակցութիւնը վերջնական կարծիք կըտայ յետոյ։

ՇՈՆՔՀՈՒԱ.—2-ինան ֆուրից հեռագիրը հաղորդում է, որ նոյեմբերի 21-ին գերմանական ծովային հետախոյզ 200 գինուոր երկու թնդանօթով մտան Քիաո-Չաու քաղաքը, որ գտնուում է ծովածոցից 18 մղոն հեռաւորութեամբ, և գրաւեցին ամբարդակն ու դռները, առանց որևէ ընդդիմութեան հանդիպելու. չինաց զօրքերը գերմանացիների մօտենալիս յետ նահանջեցին։

ՆԻՒ-ՅՕՐԿ.—Գերմանական երկու յարձանաւ մտան Հաիտի և վերջնագիր տուին, վարձատրութիւն պահանջելով գերմանահպատակ Լիւդերսի համար, որը ձերբակալուած էր և յետոյ, գերմանական ներկայացուցչի բողոքի հիման վրայ, ազատ էր արձակուած։

ՊԱՐԻԶ.—Սենատի չորրդ նախագահական միջոցներ են ձեռք առնուած, որպէսզի ցոյցերի առաջն առնին։ Հետաքրքրուող չատ մարդ է հաւաքուած։ Ժամը 2½-ին զէպի իրաւարանական ուսումնարանը գնալով սենատի մօտով ուսանողները անցան ազգակելով. «Քրեցէք Ջերեր Կեստների վրայ։ Քրեցէք «Fiargo»-ի վրայ»։

ՊԱՐԻԶ,—Սենատ։ Հոծ բազմութիւն։ Մեծ չարժում։ Ջերեր-Կեստները թոյլատուութիւն է պահանջում հարց տալու։ Վճռուած է այդ հարցը քննութեան առնել անյապաղ։ Ջերերն ասում է, որ Դրայֆուսի գործին վերաբերեալ այդքան բազմաթիւ անցքերի մէջ ինքը միշտ զսպած է պահել իրեն և զսպած էլ կըպահի մինչև գործի քննութեան վերջը։ «Զինուորական մինիստրը և խորհրդի նախագահը,—շարունակեց ճառախօսը,— պատգամաւորների ժողովում յայտարարեցին, թէ ոչ մի դոկումենտ չեն ստացել ինձնից։ Զինուորական մինիստրն ասաց, թէ ինքը տեղեկութիւն չունի իմ դոկումենտներից և թէ իրեն պէտք էլ չէը, որ տեղեկութիւն ունենար։ Ցիրաւի, գործը ես նրա մօտ չեմ թողել, բայց առաջադրեցի իմ ապացոյցները և գործին վերաբերեալ դոկումենտները։ Այս այցելութեան համար մամուլը յարձակումներ գործեց ինձ վրայ, բայց լրագիրների մէջ ես քաջ և անկաշառ աջակցութիւն էլ գտայ։ (Երկարատև բացականչութիւններ և ազմուկ)։ Պարլամենտում և գրականութեան մէջ ես նոյնպէս մարդիկ գտայ, որոնք խրախուսում էին ինձ։ Խորհրդի նախագահն ասաց, թէ իրեն չի վերաբերում դոկումենտների ընդունելը, բայց ես նրան այդ դոկումենտները ցոյց տուի։ Նա ինձ պատասխանեց, որ Դրաֆուսը մեղաւոր է։ Ես հարցրի, թէ ինչ դոկումենտների վրայ է հիմնուած այդ համոզմունքը (բուռն ընդհատումներ) և առաջարկեցի, որ նա հրապարակով յայտարարէ, որ ես սխալւում էի, եթէ ինձ ապացոյցներ տրուէին։ Խորհրդի նախագահն այդ բանին ընդդիմացաւ։ Խնդիրքներս անօգուտ անցան։ Նա ինձ ասաց, որ իմ նկատողութիւնները ինքը պարտաւոր չէ ի նկատի առնել»։ Սենատը միաձայն, 231 ձայնով, ընդունեց հերթական գործերին անցնելու բանաձևը, որով հաւանութիւն է տրւում կառավարութեան յայտարարութեանը։ Նիսաը փակուած է։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ
(Մոլոկ, Սադովայա փողոց, № 64)
(սեպհական տուն)
Հեռաձօն № 230

Երթևեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնը երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, ժամը 2—4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ. մասնաւոր ընդունելութիւնը ամենայն օր, ժամը 9—10 առաւօտեան վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը սրսրւում է ըստ դասակարգերի։ Ջուններները ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունքը մանուկները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար. Ծննդաբերական բաժանմունքը մանուկները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատելը 10 ր. մինչև 50 ր. անհամեմատութիւնը ըստ համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Ջուններների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
100—72 Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը Բաքուից մեկնում է զէպի Թիֆլիս ցերեկուայ ժամը 4-ին և 1 րոպէին, Թիֆլիս է ժամանում առաւօտեան ժամը 8-ին և 30 րոպէին. մեկնում է Թիֆլիսից զէպի Բաքու առաւօտեան ժամը 8-ին և 51 րոպէին և Բաքում է հասնում երեկոյեան ժամը 8-ին և 28 րոպէին։

Մարդատար № 3 գնացքը Բաքուից մեկնում է գիշերուայ ժամը 12 և 6 րոպէին, Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 7-ին և 10 րոպէին, Թիֆլիսից մեկնում է զէպի Բաքու ժամը 7-ին և 55 րոպէին և Բաքում է հասնում առաւօտեան ժամը 8-ին և 28 րոպէին։

Մարդատար № 2 գնացքը Բաքուից մեկնում է զէպի Թիֆլիս առաւօտ ժամը 8-ին և 15 րոպէին, Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 8-ին և 34 րոպ. Թիֆլիսից մեկնում է զէպի Բաքու երեկ. ժամը 9-ին և 34 րոպ. և Բաքու է հասնում ցերեկուայ ժամը 1-ին և 2 րոպէին։

Մարդատար № 4 գնացքը Բաքուից զէպի Թիֆլիս է մեկնում երեկոյեան ժամը 8-ին և 35 րոպ. Թիֆլիս է հասնում առաւօտեան ժամը 9-ին և 13 րոպ։ Թիֆլիսից մեկնում է զէպի Բաքու առաւօտեան 11 ժամին և Բաքու է հասնում առաւօտեան ժամը 6-ին։

№ 7 գնացքը մեկնում է Թիֆլիսից զէպի Միխայլովօ ցերեկուայ ժամը 3-ին և տեղ է հասնում երեկոյեան ժամը 6-ին և 32 րոպէին։

№ 8 գնացքը մեկնում է Միխայլովոյից զէպի Թիֆլիս գիշերուան ժամը 3-ին և 45 րոպ. և հասնում է տեղս առաւօտեան ժամը 7-ին և 30 րոպէին։

Պոստային հանրակառքերի հաղորդակցութիւնը Թիֆլիսի եւ Վլադիկաւկազի միջեւ, սկսած նոյեմբերի 1-ից մինչեւ 1898 թուի մայիսի 1-ը։

Թիֆլիսից։—5 տեղանիկառքը մեկնում առաւօտ ժամը 8-ին (գիշերում է Մլեթում) և հետեւեալ օրը, երեկոյեան ժամը 8-ին, հասնում Վլադիկաւկազ 6 տեղանի կառքը (առանց գիշերելու) մեկնում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և հասնում Վլադիկաւկազ յաջորդ օրը երեկոյեան ժամը 5-ին և 35 րոպէին։

Վլադիկաւկազ.—5 տեղանի կառքը մեկնում առաւօտեան ժամը 8-ին (գիշերում Դուգաուրում) և հասնում տեղս յաջորդ օրը երեկոյեան ժամը 8-ին և 15 րոպէին։ 6 տեղանի կառքը (առանց գիշերելու) մեկնում երեկոյեան ժամը 7-ին և հասնում տեղս յաջորդ օրը երեկոյեան ժամը 8-ին և 30 րոպէին։

ԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

824 24—14

М. № 52258 8-1

ԺԱՄԱՐԱՆ „ՊՈՒՐ-Ղ ՎԻՆՕ“

ԳՈԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՈՍՊԵԿՏ

ՏՈՒՆ ԻԵ. Կ. Ի. ԲԱԳՐԱՏԻՈՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿՈՒ

ԺԱՄԸ. 1) 4 տեսակ և մի բաժակ օղի, ½ շիշ պինի, կամ 1 շիշ գարեջուր և մի դաւաթ սուրճ—Մէկ րուբլի։ 2) 3 տեսակից մի բաժակ օղի, ½ շիշ պինի, կամ մէկ շիշ գարեջուր և մի դաւաթ սուրճ—80 կոպ.։ 3) երկու տեսակից, մի բաժակ օղի ½ շիշ պինի, կամ 1 շիշ գարեջուր և մէկ դաւաթ սուրճ—60 կոպ. և 4) երկու տեսակից, մի բաժակ օղի և մի դաւաթ գարեջուր կամ մի բաժակ պինի—40 կոպ.։

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԽՈՒՀԱՆՈՑ։ Կերակուրները որպէս Եւրոպական նմանապէս և Ասիական ու Տեղական։ Գնեըբմատչելի են։

ԱՄԵՆ ՏԵՍԿ ԽՄԻՉՔՆԵՐ։ ՕՂԻՆԵՐ. Սամբուսի և Պաստիլի, Շրիտերի և Սարաջևի—բաժակը 5 կոպ.։ Կոնեակ, Ջուբրովկա, քինաքիաժի օղի, անգլիական գառն ղ այլն—բաժակը 10 կոպ.։ Գինու մի դաւաթը 5 կոպ.։ Մի շիշ «ԿԱԽԵԹԻԱ» 40 կոպ-ից սկսած ½ շիշը 20 կոպ-ից, Իշխան Բագրատիոն-Մուխրանսկու պինիները 40 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իշխան Ջորջաձէին 38 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իշխ. Ճաւճաւաձէինը 30 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իսկ ½ շիշը 15 կոպ.։

ԴԱՐԵՋՈՒՐ ՎԵՏՃԵԼԻ Գաւաթը 5 կոպ, շիշը 15 կոպ. Բարական կուսա՝ շիշը 15 կոպ.։ Լիմոնադ, սիփոն և մրգիպէնի ջրերը ½ շիշը 10 կոպ.։ Թէյը և կաթը 5 կոպէկ. սուրճը 10 կոպ։

Միևնոյն տեղում առանձին դահլիճում կան 5 հատ ֆրէյբերգի բիլիարդ ներ, ժամը 30 կ. Նարդին և շախմատը ցերեկով 15 կ. իսկ գիշերը 20 կ. Ճաշարանն ունի և կահաւորուած սենեակներ 40 կոպէկից մինչև 1 ր. 50 կ. իւրաքանչիւր օր ու գիշերուան համար. ամիսը 10 ր, մինչև 30 ր։

Ծարպան օր՝ ԵԳՈՐ ՄԱՄԻԱՆՑԱՉԻԼԻ։

(795) 20—15

29-й годъ изданія. ОТКРЫТА ПОДПИСКА НА ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ 1898 г.

„НИВА“

ВЫХОДЯЩІЙ ЕЖЕНЕДѢЛЬНО, СО МНОГИМИ БЕЗПЛАТНЫМИ ПРИЛОЖЕНІЯМИ

Гг. подписчики «НИВЫ» получатъ въ теченіе 1898 года:

52 №№ художественно-литературнаго журнала „НИВА“, заключающаго въ себѣ въ теченіе года около 1500 столбцовъ текста и 500 гравюръ и рисунковъ.

ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ И. С. ТУРГЕНЕВА,

которое явится первымъ по полнотѣ содержанія, такъ какъ въ него войдутъ „Стихотворенія“ Тургенева, не помѣщенныя въ прежнихъ изданіяхъ. Полное собраніе сочиненій Тургенева будетъ приложено къ „Нивѣ“ въ теченіе одного 1898 года, въ 12 томахъ. отпечатанныхъ на хорошей глазированной бумагѣ, еще болѣе четко, чѣмъ приложенія предыдущихъ лѣтъ. съ приложеніемъ автографа и портрета И. С. Тургенева, и будетъ выходить. подъ заглавіемъ „Сборника Нивы“; по одному тому въ началѣ каждаго мѣсяца Содержаніе отдѣльныхъ томовъ слѣдующее:

Томъ I. Портретъ и факсимиле И. С. Тургенева. Предисловіе. Біографія И. С. Тургенева. Записки охотника. **Томъ II.** Отцы и дѣти. Наканунѣ. **Томъ III.** Дымъ. Дворянское гнѣздо. **Томъ IV.** Новь Рудинъ. **Томъ V.** Андрей Колосовъ. Бреттеръ. Три портрета. Жидъ. Петушковъ. Дневникъ лишняго человѣка. Три встрѣчи. Муму. Постоялый дворъ. **Томъ VI.** Два пріятеля. Затишье. Переписка. Яковъ Пасынковъ. Фаустъ. Поѣздка въ Полѣсье. Ася. **Томъ VII.** Первая любовь. Призраки. Довольно. Собака. Исторія лейтенанта Ергунова. Бригадиръ. Несчастная. Странная исторія. Степной Король Лиръ. **Томъ VIII.** Вешнія воды. Стукъ... стукъ... стукъ! Пунинъ и Бабуринъ. Часы. Сонъ. Разсказъ отца Алексѣя. Отрывки изъ воспоминаній. Пѣснь торжествующей любви. **Томъ IX.** Клара Миличъ. Стихотворенія въ прозѣ. Стихотворнія. **Томъ X.** Вмѣсто предисловія. Неосторожность. Безденежье. Гдѣ тонко, тамъ и рвется. Нахлѣбникъ. Холостякъ. **Томъ XI.** Завтракъ у предводителя. Мѣсяцъ въ деревнѣ. Провинціалка. Разговоръ на большой дорогѣ. Вечеръ въ Сорентѣ. **Томъ XII.** Литературныя и житейскія воспоминанія. Критическія статьи и рѣчи. Некрологи, письма. Переводы. Хронологическій и алфавитный указатели.

☞ Соч. Тургенева могутъ быть пріобрѣтены въ видѣ безплатнаго приложенія только въ теченіе 1898 г. и отдѣльно отъ „Нивы“ не продаются ☜

12 КНИГЪ „ЕЖЕМѢСЯЧНЫХЪ ЛИТЕРАТУРНЫХЪ ПРИЛОЖЕНІЙ“, которыя будутъ выходить при „Нивѣ“ въ срединѣ каждаго мѣсяца и содержать въ себѣ романы, повѣсти, разсказы и проч. современныхъ авторовъ.

12 №№ „ПАРИЖСКИХЪ МОДЪ“, выходящихъ ежемѣсячно и содержащихъ до 300 модныхъ гравюръ.

12 ЛИСТОВЪ рукодѣльныхъ и выпильныхъ работъ (около 300) и до 300 чертежей выкроекъ въ натуральную величину, выходящихъ ежемѣсячно.

„СТѢННОЙ КАЛЕНДАРЬ“ на 1898 г, печатанный красками.

ПОДПИСНАЯ ЦѢНА на годовое изданіе со всѣми вышеозначенными приложеніями: Безъ доставки въ СПБ. 5 р. 50 к. Съ доставкою въ СПБ. 6 р. 50 к. Безъ доставки въ Москвѣ (въ конт. Н. Н. Печковской) 6 р. 25 к. Съ пересылкою во всѣ города и мѣстности Россіи 7 р. ЗА ГРАНИЦУ 10 р.

Требованія просятъ адресовать: въ С. Петербургъ, въ Главную Контору журнала „НИВА“ (А. Ф. МАРКСУ), малая Морская, д. № 22.

(М.) 1—1.

Дбз. цензурою, Тифлисъ, Ноября 27-го дня 1897 г., Տպարան Ս. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейтера